

**L. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Թեմա՝ Ուսումնառության ժամանակակից մոտեցումները սովորողների ներգրավվածության բարձրացման համար**

**Ուսուցիչ՝ Վ. Սիմոնյան**

**Ղեկավար՝ Թ. Միրզոյան**

**Երևան 2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն \_\_\_\_\_2

Ներածություն \_\_\_\_\_3

### **ԳԼՈՒԽ 1 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

1. 1 ՈՒՅՁ-ն սովորողների ներգրավման բազմազանությունն ապահովող  
համակարգ \_\_\_\_\_ 4

1. 2 Ներգրավման ձևերի բազմազանություն \_\_\_\_\_ 6

1.2 Դասի պլանավորում \_\_\_\_\_ 8

### **ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈՂՆԵՐ**

1. 1 Ուսուցման փոխներգործուն մեթոդներ \_\_\_\_\_9

1. 2 Ակտիվ մեթոդների կիրառման իմ փորձը <<Ես և շրջակա աշխարհը>>  
առարկայի դասաժամին \_\_\_\_\_ 13

Եզրակացություն \_\_\_\_\_16

Գրականություն \_\_\_\_\_17

## Ներածություն

Ժամանակակից մանկավարժությունն արագ տեմպով զարգանում է և ուսուցիչներն ունեն դասավանդման նոր մոտեցումներին տիրապետելու անհրաժեշտություն: Նրանք ցանկանում են դասավանդել՝ նկատի ունենալով համընդհանուր ներառումը, սակայն բախվում են դժվարությունների հետ, որովհետև չունեն համապատասխան պատրաստվածություն, աջակցություն: Հաճախ էլ չեն տիրապետում դասավանդման ժամանակակից մեթոդների: 21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիայի զարգացմանը զուգընթաց փոխվում են սովորողների հետաքրքրության պահանջները: Այդ պատճառով էլ սովորողներին դասն անհետաքրքիր է, մի մասն էլ կարծում է, թե ստացած գիտելիքները կյանքում անհրաժեշտ չեն: Կրթության զարգացմանը զուգընթաց պետք է փոփոխվեն ուսուցիչների դասավանդման մեթոդիկան, սովորելու պայմաններն ու միջավայրը, մոտիվացիայի տարբերակները: Ուսուցիչը պետք է կիրառի նորարական մեթոդներ, մոտիվացնող հնարներ, որոնք սովորողին կներգրավեն դասապրոցեսում: Այս հետազոտական աշխատանքը կօգնի ուսուցչին, որպեսզի մարտահրավերներին համապատասխան գիտելիքներ ունենա: Աշխատանքում ընդգրկված են ժամանակակից մեթոդներ, մոտեցումներ, հնարներ, որոնք կիրառվում են շատ երկրներում, նաև Հայաստանում: Դրանք սովորողներին դասապրոցեսում ներգրավելու արդյունավետ միջոցներ են:

### Հետազոտական այս աշխատանքի նպատակները՝

- 1/ աջակցել ուսուցիչներին՝ ուսուցումն ավելի հետաքրքիր դարձնելու համար
- 2/ զարգացնել ուսուցիչների՝ ավելի արդյունավետ ուսուցում կազմակերպելու կարողություններն ու հմտությունները
- 3/ բարձրացնել դասավանդման և ուսումնառության որակը:

### Խնդիրները՝

- 1/ ուսումնասիրել հետազոտման համար ընտրված թեմային համապատասխան գրականություն, մշակել այն
- 2/ հիմնախնդիրը տեսնել սեփական դասապրոցեսի ընթացքում, կիրառել նոր մեթոդներ, մոտեցումներ, լսել նաև աշակերտների կարծիքները
- 3/ սեփական փորձը համեմատել ուսումնասիրված գրականության հետ
- 4/ աշխատանքում ներկայացնել թեման, վերլուծել թեմայի շուրջ գրված կյուլերը, ապա ներկայացնել սեփական փորձով ձեռք բերածը
- 5/ ձևակերպել եզրահանգումներ՝ առաջարկելով նոր մոտեցումներ:

## Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն




Դասի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե որքան է այն հետաքրքրում սովորողներին և ինչպես են նրանք ներգրավված դասապրոցեսում:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը՝ ՈՒՀԶ, ուսումնառությունը խթանող և աջակցող սկզբունքների գիտականորեն արժանահավատ համակարգ է, որի դերը դասավանդման պլանավորման, ուսումնական ծրագրերի ձևավորման փուլում ուսուցման բոլոր խաչնդոտների և արգելքների քարտեզագրումն է և այդ հիմնախնդիրներին լուծումներ առաջարկելը:

ՈՒՀԶ-ն կազմված է երեք հիմնական սկզբունքներից, որոնցից յուրաքանչյուրը կապված է մարդու ուղեղի համապատասխան այնպիսի բաժնի հետ, առանց որի մարդ արարածը չի կարող սովորել:

Սանդղակ 1-ը ներկայացնում է ՈՒՀԶ-ի երեք սկզբունքներն ու դրանց համապատասխանությունը ուղեղի՝ սովորելու համար պատասխանատու բաժինների հետ:




Սանդղակ 1

<p><b>Ճանաչողական ցանց</b> Ուսումնառության «ինչ»-ը</p>	<p><b>Ռազմավարական ցանց</b> Ուսումնառության «ինչպես»-ը</p>	<p><b>Հուզական (աֆեկտիվ)</b> Ուսումնառության «ինչու»-ն</p>
		
<p>Ինչպես ենք հավաքում փաստերը, դասակարգում այն, ինչ տեսնում ենք, լսում ու կարդում:</p> <p><b>Ներկայացրո՞ւ տեղեկությունը տարբեր կերպերով:</b></p>	<p>Առաջադրանքների պլանավորում, կատարում: Ինչպես ենք կառուցում, արտահայտում գաղափարները:</p> <p><b>Տարբերակիր առաջադրանքները, միջոցները, որոնցով սովորողներն արտահայտում են գիտելիքը:</b></p>	<p>Ինչպես ենք մոտիվացվում և ընդգրկվում, հաղթահարում դժվարությունները, ոգևորվում, հետաքրքրվում:</p> <p><b>Մոտիվացրո՞ւ և հետաքրքրիր:</b></p>

Մ. Խաչատրյան, Մ. Դավթյան Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ 2-րդ հատոր, 2019թ. էջ 42, 44

Սանդղակ 2-ը ներկայացնում է ՈՒՀԶ-ի բուն կառուցվածքը

Սանդղակ 2

		
<b>2.1. Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն</b>	<b>2.2. Ուսումնական գործունեության և գիտելիքն արտահայտելու ձևերի բազմազանություն</b>	<b>2.3. Ներգրավման ձևերի բազմազանություն</b>
2.1.1. Ընկալում	2.2.1. Ֆիզիկական գործունեություն	2.3.1. Հետաքրքրության խթանում
2.1.2. Լեզու և սիմվոլներ	2.2.2. Սահուն արտահայտվելու հմտություններ	2.3.2. Ջանքերի շարունակականություն և տոկունություն
2.1.3. Ըմբռնում	2.2.3. Մտավոր գործընթացներ	2.3.3. Ինքնատիրապետում և ինքնակարգավորում

**ՈՒՅՁ-ն՝**

- Վերացնում և նվազեցնում է ուսուցման խոչնդոտներն ու արգելքները
- Ստեղծում է բոլոր սովորողների համար համընդհանուր կերպով հասանելի ուսումնական ծրագրեր և դասեր
- Օգնում է տարբերելու ուսուցման բովանդակությունը Ֆելդերն ու Բրենսոը, քննարկելով սովորողների բազմազանությունը, առանձնացնում են երեք հիմնական գործոններ՝
  - ուսումնառելու տարբեր ոճեր
  - սովորելու մոտեցումներն ու ուղղվածությունը
  - մտավոր զարգացումը:

Ուսումնառության ոճերը ուսումնառության միջավայրի և դրա բովանդակության հետ փոխներգործելու իմացական, հոգեբանական և հուզական ցուցիչներ են, որոնք հարաբերականորեն կայուն են: Սովորողների մի մասը նյութն ընկալում է լսողական, որոշներն էլ տեսողական ճանապարհով:

Մ. Խաչատրյան, Մ. Դավթյան Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ Զանգակ Երևան 2019թ էջ 42, 44

Որոշ սովորողներ դրսևորում են տեղեկատվության յուրացման մակերեսային, իսկ որոշներն էլ առավել խոր, բովանդակային մոտեցումներ, որոշ սովորողներ էլ կարողանում են ռազմավարական մոտեցումներ կիրառել:

Սովորողներն ունեն մտավոր զարգացման և ընկալման տարբեր աստիճաններ:

Ուսուցման բովանդակության մատչելիությունն ու հասանելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է նյութը մատուցել բազմաթիվ եղանակներով: Անհրաժեշտ է ապահովել այլընտրանք

- լսողական տեղեկատվության ընկալման համար
- տեսողական տեղեկատվության համար

Որպեսզի ուսուցումը լինի մատչելի անհրաժեշտ է՝

- պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները, մաթեմատիկական արտահայտություններն ու բանաձևերը
- ցուցադրել տեղեկատվությունը բազմազան միջոցներով
- ապահովել ըմբռնման ձևերի բազմազանություն
- ընդգծել կարևոր գաղափարները, դրանց միջև գոյություն ունեցող կապը ցույց տալ
- ուղղորդել տեղեկության գործածման, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործողությունը
- առավելագույնի հասցնել գիտելիքի ընդհանրացումն ու ոլորտից ոլորտ փոխանցելը

### **Ներգրավման ձևերի բազմազանություն**

**Ներգրավման ձևերի բազմազանությունը** ներառում է հետևյալ սկզբունքները

- տրամադրել տարբերակներ և ընտրելու հնարավորություն՝ հետաքրքրություն արթնացնելու համար
- բավարար հնարավորությունների անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար
- ուսումնառությունը կապել իրակն կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը

Ուսուցման ակտիվ մեթոդներով դասավանդման ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողները գիտելիքներն ինքնուրույն են ձեռք բերում ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Այսպիսով, անհրաժեշտ է խթանել երեխայի հետաքրքրասիրություն, գիտելիքը նա ինքը կգտնի: Սովորողների ներգրավվածության բարձրացման եղանակները բազմազան են: Դրանցից են՝

### **1/Ուսուցման պայմանների, միջավայրի ստեղծում**

Ինչ խոսք, սովորողի համար ուսումնառությունը կլինի հաճելի ու արդյունավետ պրոցես, եթե նա սովորի դիդակտիկ պարագաներով, համակարգիչներով, լաբորատոր նյութերով հագեցած դասարանում:

### **2/Առարկան, դասավանդման նյութը կապել իրական կյանքի հետ**

Եթե սովորողը գիտի, թե տվյալ գիտելիքը ինչու է ինքը սովորում և իրական կյանքում որտեղ է իրեն պետք գալու, ապա մեծանում է նրա մոտիվացիան: Այս դեպքում հեշտ է աշակերտին ներգրավել դասապրոցեսում:

### **3 /Դասի մուտքը**

Ուսուցանողը պիտի ջանա յուրաքանչյուր դասի մուտքը դարձնի յուրօրինակ և

խորհրդավոր: Աշակերտները սիրում են գաղտնիքներ և ցանկանում են թույլ առաջ բացահայտել դրանք:

### **4/Անհատական մոտեցում**

Աշակերտները սովորում են տարբեր ձևով. մեկը հեշտությամբ է սովորում, երբ դասանյութը մատուցվում է պատկերների հետ միասին, մյուսը լավ է հիշում, եթե գիտելիքը լսում է, երրորդը դասը յուրացնում է գրելով ևն: Ուստի անհրաժեշտ է

յուրաքանչյուր սովորողի ցուցաբերել անհատական մոտեցում՝ նրա կարողություններին, խառնվածքին և ընդունակություններին համապատասխան:

### **5/Ակտիվ մեթոդների կիրառում**

Սովորողին դասապրոցեսին մասնակից դարձնելու արդյունավետ միջոց է ակտիվ, փոխներգործուն մեթոդների կիրառումը: Այս մեթոդները դասը դարձնում են

աշակերտակենտրոն: Նա միշտ գտնվում է հետազոտելու, համադրելու, վերլուծելու, բացահայտելու պրոցեսում:

## **Դասի պլանավորում**

ժամանակակից հետազոտողներն առաջարկում են դասի ընթացքը բաժանել **հինգ փուլերի**:

### **I փուլ**

Այս փուլի նպատակն է հետաքրքրություն առաջացնել դասապրոցեսի, թեմայի նկատմամբ:

### **II փուլ**

**Այս փուլում ներկայացվում է Նոր Նյուօքսֆորդի Նյուօքսֆորդի անհրաժեշտ է անհրաժեշտ է կիրառել** դիդակտիկ նյութեր, սահիկաշար, ձայնագրություն, տեսանյութ: Նոր թեման պետք է կապվի կյանքի հետ, այսինքն դասավանդողը պետք է ցույց տա, թե սովորողին այդ գիտելիքը կամ հմտությունը երբ է պետք գալու:

### **III փուլ**

**Այս փուլում կատարվում է խմբային կամ զույգերով աշխատանք և կրառվում են Նոր սովորած գիտելիքները:** Այս փուլի ընթացքում զարգացնում է սովորողների համագործակցային և թիմային աշխատանքի հմտություններ:

### **IV փուլ**

Այս փուլում սովորողները կատարում են ինքնուրույն աշխատանք:

### **V փուլ**

**Այս փուլը դասի ավարտն է, կատարվում է անդրադարձ տվյալ դասի ընթացքում սովորածին:**

Վերոնշյալ քայլաշարը վերաբերում է 5 քայլով դասապլանին: Դասերը կարող են պլանավորվել նաև 3 կամ 4 քայլով՝ կախված դասավանդողի նախընտրությունից, թեմայի և սովորողների առանձնահատկություններից:

---

Ա. Սվաջյան, Լ. Մնացականյան Ներառող դասավանդում մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Երևան 2023, էջ 132,133



## Ուսուցման ակտիվ մեթոդներ

Դասավանդման արդյունավետության ապահովումը պայմանավորված է դասավանդման մեթոդների, դասի վերջնարդյունքների և գնահատման չափանիշների համապատասխանեցմամբ:

Դասին նախապատրաստվելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ քայլերը.

1. Հստակ սահմանել դասի վերջնարդյունքները:
2. Ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն դասի վերջնարդյունքների իրականացումը:
3. Ընտրել վերջնարդյունքները գնահատելու եղանակները:
4. Վերլուծել դասի վերջնարդյունքները և հասկանալ, թե որքանով են դրանք իրականացվեցին:  
Աղյուսակում ներկայացված են երկու համակարգերի բնորոշ առանձնահատկությունները:

Ուսուցչակենտրոն ուսուցում	Աշակերտակենտրոն ուսուցում
Ուշադրության կենտրոնում ուսուցիչն է:	Ուշադրության կենտրոնում աշակերտն է:
Տեղեկատվության փոխանցում ուսուցչից աշակերտներին:	Աշակերտների կողմից գիտելիքների ակտիվ ձեռքբերում:
Ուսուցման մեթոդը ամբողջական, կայուն և ստանդարտացված է:	Կիրառվում են ուսուցման տարբեր ձևեր:
Ուսուցիչը տալիս է ճիշտ պատասխաններ տարբեր հարցերին:	Ուսուցիչը հարցեր է տալիս, սովորողները պատասխանում են:
Ուսուցիչը վարում է ուսուցման գործընթացը:	Ուսուցիչը ուղեկցում է ուսուցման գործընթացին:
Ուսուցման գործընթացը ստատիկ և անփոփոխ է:	Ուսուցման գործընթացը դինամիկ և փոփոխական է:
Ուսուցիչը և աշակերտը հակադրված են միմյանց:	Ուսուցիչը և աշակերտը աշխատում են միասին:
Դասախոսություններ:	Քննարկումներ:

Գնահատումը քննության միջոցով:	Անընդհատ գնահատում:
Դասացուցակ:	Ծրագիր, պլան:

Ներկայումս ուսուցման մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ **ավանդական** և **ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ**: Ավանդական է համարվում գիտելիքի փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ **փոխներգործուն մեթոդներ**:

**Փոխներգործուն** մեթոդները հնարավորություն են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին փոխազդել միմյանց վրա: Սովորողները և ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ:

Անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը ներառի.

1. ուսուցչի ուսուցողական գործունեության նկարագրությունը
2. աշակերտի ուսումնաճանաչողական գործունեությաննկարագրությունը,
3. վերը նշվածների միջև կապը

Ցանկալի է դասի նախապատրաստական մասը սկսել տնային աշխատանքների վերաբերյալ պարզաբանումներից, ապա հաղորդել նոր դասի թեման և նպատակը:

**Նախապատրաստական փուլում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները.**

- Մտագրոհ
- խմբավորում
- պրիզմա
- հինգրոպեանոց ազատ շարադրանք
- ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները
- ուղղորդված ընթերցանության առաջին քայլը և այլն:

**Նոր նյութի ներկայացման փուլում կիրառման համար նպատակահարմար են հետևյալ մեթոդները.**

- խճանկար
- զբոսանք պատկերասրահում

Ա. Սվաջյան, Լ. Մնացականյան Ներառող դասավանդում մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Երևան 2023, էջ 132,133պրիզմա

- ձևագրողի
- փոխներգործուն նշանների համակարգ
- Վենի դիագրամ
- մտածի՛ր, զուգորդի՛ր, մտքե՛ր փոխանակիր
- մտքերի տարափ
- հնգյակներ
- դերային խաղ
- գաղափարների քարտեզագրում
- T-աձև աղյուսակ
- քառաբաժան
- խորանարդում
- ԳՈԻՍ
- հավասարապես լսել և աշխատել
- բանավեճ

Ակտիվ, ինտերակտիվ մոտեցումներն ու մեթոդները բազմաթիվ են: Ակտիվ ուսուցման մոտեցումներ են՝

- **Շրջված դասարան**

**Այս մեթոդի** կիրառման ժամանակ սովորողը տանը ծանոթանում է նոր դասի բովանդակությանը, հասկացությունների հետ, իսկ դպրոցում վերլուծում, քննարկում են թեման և դրա վերաբերյալ կատարում են վարժություններ: Դասավանդողը կատարում է խորհրդատուի դեր և սովորողներին դասանյութի հետ նախապես փոխանցում է տեսանյութեր, սահիկաշարեր:

- **Նախագծային աշխատանք**

Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն: Այստեղ ուսուցանողը ստանձնում է մշակողի, համակարգողի, խորհրդատուի դեր: Սովորողը զարգացնում է սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու կարողությունը:

- **Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի(ԳՈԻՍ)**-Դասը սկսելու շատ հայտնի հնար է ԳՈԻՍ-ը: Դասասկզբում ուսուցանողը գծում է աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում

Ա. Սվաջյան, Լ. Մնացականյան Ներառող դասավանդում մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Երևան 2023, էջ 142,143, 153

- ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի սկզբին սովորողներն ասում են, թե ինչ գիտեն այդ թեմայի վերաբերյալ և լրացնում են Է գիտեմ սյունակը: ապա սովորողներն ասում են, թե ինչ են ցանկանում իմանալ թեմայի վերաբերյալ և լրացնում են ուզում եմ իմանալ սյունակը: դասի վերջում լրացնում են սովորեցի սյունակը:


---

## Ակտիվ մեթոդների կիրառման իմ փորձը << Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դասաժամերին

Անհրաժեշտ է, որպեսզի դասավանդողը նախապես և ճիշտ պլանավորի դասը: Դասը հետաքրքիր դարձնելու և ուսումնառությունը նպատակային լինելու համար պետք է կարևորել ուսուցման երեք հարցերը/ի՞նչ, ինչու՞, ինչպե՞ս/: Ի՞նչ-ը հարցը գիտելիքների այն ամբողջականությունն է, որը սահմանվում է առարկա յական չափորոշիչներով, ծրագրերով: Ցանկացած գիտելիք հնարավոր է հետաքրքիր մատուցել և այդ հարցում մեզ կօգնեն ինչու՞ և ինչպե՞ս հարցադրումները: Որպեսզի սովորողը հասկանա, թե ինչու է սովորում տվյալ գիտելիքը, դասավանդողը պետք սովորողներին բացատրի, թե որտե՞ղ և ե՞րբ է կիրառվելու սովորածը, սովորողն ի՞նչ արդյունք կստանա այդ գիտելիքը սովորելու դեպքում: Ինչպե՞ս-ը գիտելիքի մատուցման, ուսուցանման ձևն է: Ակտիվ մեթոդների կիրառման դեպքում մեծանում է սովորողների ակտիվությունը, պրակտիկ գործունեության բազմազանությունը: Սովորողների հետ զրույցները կարող են դասավանդողին օգնել ուսուցումն արդյունավետ կազմակերպելու հարցում: Հաճախ սովորողներն ասում են, թե ինչն էր իրենց հետաքրքիր, որ մեթոդն առավել դուր եկավ: Այսպիսով դասավանդողը կկարողանա այնպիսի դաս պլանավորել, որը կհետաքրքրի սովորողներին և կապահովի բարձր ներգրավվածություն:

Թեման մտագրոհով սկսելը դասավանդողին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել, թե ինչ գիտեն սովորողները տվյալ թեմայից, կարծես հայտորոշիչ գնահատում իրականացվի ուսուցանողի կողմից, որն էլ օգնում է դասի ընթացքն արդյունավետ իրականացնել:

օր. ` <<Մեզ սնող հողը>> թեման ուսուցանելիս դասն սկսել մտագրոհով



Մեր մոլորակի բազմազանությունը թեմայի ընթացքում T-ձև աղյուսակի միջոցով սովորողները ներկայացրել են անապատն ու անտառը: Այս մեթոդը հարմար է համեմատություններ կատարելու համար:


Անապատ	Անտառ
Չկա բուսականություն	Շատ են բույսերը
Շոգ է	Չոք է
Ամբողջությամբ ավազ է	Սևահող է
Չոր է	Խոնավ է

**Քառաբաժան մեթոդը կիրառեցի** <<Ջուրը բնության մեջ>> թեմայի շրջանակներում:

Ի՞նչ պատկեր տեսա	Ի՞նչ ձայներ լսեցի	Ի՞նչ հույզեր ունեցա	Ի՞նչ եզրահանգում արեցի
Անծայրածիր օվկիանոս, գետ, լիճ	Շառաչ, քչքչոց	Ուրախություն, հանգստություն	Ջուրը պետք է մաքուր պահել
Կեղտոտ ծով, գետ	Աղբի շարժվելու	տագնապ	պետք է մաքրել աղտոտված ջրային տարածքները
Ամպ, անձրև	կաթոց	տխրություն	Ամպերից թափվեց ջրային տարածքներից գոլորշիացած ջուրը

Դասավանդելիս շատ եմ օգտագործում **աղյուսակներ, գծապատկերներ**, որոնք դասանյութը ավելի մատչելի են դարձնում:

---



SՅՏ մի շարք գործիքներ կիրառելով հնարավոր է իրականացնել ձևավորող գնահատում: Իհարկե ճիշտ կլինի, որ յուրաքանչյուր աշակերտ դասապրոցեսի ընթացքում կարողանա օգտվել SՅՏ միջոցներից: Քանի որ այդպես հնարավոր չէ, ես կազմում եմ Google forms, Quizizz, Kahoot, Learningapps գործիքներով հարցաշարեր և հղումս ուղարկում եմ դասարանական խմբեր, որոնց բացված են massinger հավելվածում: Այս գործիքներով սովորողների մեջ կարելի է զարգացնել մրցակցություն, արագ կողմնորոշվելու հատկություն:

## Եզրակացություն

Նկատի ունենալով, որ հանրակրթության պետական չափորոշիչը պահանջում է ուսուցում հիմնված կարողունակությունների վրա, անհրաժեշտ է կազմակերպել ուսուցումը ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, որպեսզի հնարավոր լինի սովորողների մոտ ձևավորել անհրաժեշտ կարողունակությունները: Սովորողները պետք է չլինեն պասիվ ընկալողի դերում, այլ իրենք պետք է հայտնաբերեն գիտելիքը, ձեռք բերեն կարողունակություններ, գիտելիքը կապեն իրական կյանքի հետ: Անհրաժեշտ է ուսուցման դաս- դասարանային մեթոդից բացի դասերն իրականացնել թանգարաններում, մշակութային օջախներում, իրականացնել էքսկուրսիաներ դեպի ՀՀ մարզեր, կազմակերպել հանդիպումներ գրողների կամ մշակութային գործիչների մասնակցությամբ:

Կարևոր է, դասը նախապես պլանավորել, ընտրել դասին համապատասխան մեթոդները, շեշտը դնել ճիշտ ձևակերպված նպատակի և չափելի վերջնարդյունքների վրա, որոնք սահմանելիս պետք է նկատի ունենալ Բլումի բայերը:

Անհրաժեշտ է պատասխանատու մոտեցում ունենալ յուրաքանչյուր դասի նկատմամբ:

Հմուտ ուսուցիչը կարող է դսերն այնպես իրականացնել, որ ի հայտ գան սովորողների այնպիսի ունակություններ, որոնք մինչ այդ բացահայտված չեն եղել:

Այսպիսով, դասավանդողն ազատ է ընտրել բազմաթիվ մեթոդներից այն, որը հարմար է տվյալ դասի թեմային, սակայն ուսուցիչները պետք է զբաղվեն ինքնակատարելագործմամբ, որպեսզի տիրապեն այդ մեթոդներին:



### **Գրականություն**

1/ Մ. Խաչատրյան, Մ. Դավթյան Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ Չանգակ Երևան 2019

2/ Ա. Սվաջյան, Լ. Մնացականյան <<Ներառող դասավանդում>> Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023

3/Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ա. Խաչատրյան Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները Երևան 2017

---

---